

ԻՆՎԵՍՏԱՐԳԻՐ



գրական հանդես



ԵՐԵՎԱՆ
2023

ԻՆՔՆԱԳԻՐ #10

Inknagir (autograph)
ISSN 1829-1139

Խմբագիր՝
Վիոլետ Գրիգորյան

Շապիկի գաղափարը՝
ԻՆՔՆԱԳԻՐ հանդեսի

Սրբագրիչ՝
Նարինե Հովակիմյան

Ինքնագիր գրական ակումբ ՀԿ
Գրանցում՝ 211.171.00230, տրվել է 29.11.2001 թ.
www.inknagir.org
violet.grigoryan@inknagir.org
© Ինքնագիր գրական ակումբ, 2023



Համարը հրատարակվել է
«Վերածնունդ» մշակութային և ինտելեկտուալ
հիմնադրամի աջակցությամբ:

newmag

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Վ Չ Ա Տ ՈՒ Ն

Գործադիր տնօրեն՝
Արտակ Ալեքսանյան

Փոխտնօրեն՝
Ավետիս Հարությունյան

Գլխավոր խմբագիր՝
Գնել Նալբանդյան

Գլխավոր դիզայներ՝
Էդիկ Պողոսյան

Մարկետինգի և վաճառքի ղեկավար՝
Գոհար Ալեքսանյան

Ռազմավարական և հատուկ նախագծերի ղեկավար՝
Գոհար Մանուկյան

«Նյու Մեգ» ՍՊԸ
Գրանցում՝ 286.110.07868, տրվել է 28.02.2011

+374 91 511 994
info@newmag.am
newmag.am



Այս համարի ցանկացած նյութ կարելի է որևէ լեզվով ամբողջությամբ
կամ հատվածաբար օգտագործել միայն Ինքնագիր գրական ակումբի
գրավոր թույլտվությամբ: Հանդեսին հղումը պարտադիր է:
«Նյու Մեգը» պատասխանատվություն չի կրում հանդեսի և
տեղադրված գովազդի բովանդակության համար:

Նվիրվում է Վահան Իշխանյանի հիշատակին:

Bookmark

06 #ինքնագիր

Սկսելով պատերազմից հետոն

11 #բնագիր

- 12 **Վահան Իշխանյան** Դառը ծով (հատված վեպից)
- 41 **Լուսինե Եղյան** երկիր - պատ
- 47 **Էդվարդ Միլիտոնյան** Բանաստեղծություններ
- 49 **Անի Ասատրյան** ան_երես ուրվագրություն
- 60 **Գրիգոր Պըլտյան** Մանտրա ԽԸ
- 66 **Շուշանիկ Թամրազյան** Սպիտակ երեքշաբթի
- 67 **Շուշանիկ Թամրազյան** Աստղագուշակներն
ինձ համար (ամանորյա հեքիաթ)
- 68 **Շուշանիկ Թամրազյան** Սիրտը
- 69 **Շուշանիկ Թամրազյան** Վերջակետ
- 79 **Սուսաննա Հարությունյան** Ձիերը կարմիր էին (հատված վեպից)
- 88 **Ռենա Վիրիդյան** Մի օր իմ փոխարեն
- 90 **Հայկ Հովյան** 26 09 2020...
- 95 **Մարինե Պետրոսյան** Քսան ու մի հատ էլ քսան
- 118 **Գուրգեն Խանջյան** Ինչ կա-չկա (հատված վիպակից)
- 130 **Ներսես Աթաբեկյան** Օրորոցային Եռաբլուրի համար
- 135 **Միսաք Խոստիկյան** Բայկանուր
- 140 **Սարգիս Հովսեփյան** Տափակ քար
- 148 **Աննա Դավթյան** Մարկոյի համար
- 152 **Աննա Դավթյան** Միշտ կերգվի
- 156 **Մելիքսեթ Փանոսյան** Պատերազմն ու մենք
- 161 **Նարինե Կոռյան** Ճանճերի ժամանակը
- 166 **Սյունե Սևադա** Տունը որ շինել եմ
- 170 **Լիլիթ Բլեյան** Բանաստեղծություններ
- 176 **Բյուրակն Իշխանյան** Քառասուն
- 182 **Գրիգ FRIEDENSDORF** (հատված վիպակից)

- 190 **Վահե Արսեն** Բանաստեղծություններ
- 194 **Արմենուհի Սիսյան** Իշու ձագ
- 196 **Արմենուհի Սիսյան** Չտխրեք
- 198 **Արմենուհի Սիսյան** Պատժել գողերին
- 200 **Վիոլետ Գրիգորյան** Բանաստեղծություններ
- 207 **Հենրիկ Պիպոյան** Որկրապատում

225 #թատերգություն

- 226 **Աննա Սարգսյան** Կատարյալ դիակը

241 #թարգմանություն

- 242 **Քորնել Ուեսթ** Կոռնել Ուեսթեն՝ Խօսք համերաշխության
- 247 **Ինկոգնիտո հեղինակ** Փարքեր մորթուրը
- 250 **Ինկոգնիտո հեղինակ** Մեր հոր երիտասարդ դիակը
- 254 **Իմանտս Ջիեդոնիս** Էպիֆանիաներ
- 263 **Շառլ Ազնավուր** Այս կռվի մանուկները
- 265 **Մարիս Բերգինշ** Կապարի համը

269 #հարցազրույց, էսսե

- 270 **Եվա Հակոբյան** Հայաստանի Գավրասին սպասելիս
- 279 **Վիոլետ Գրիգորյան** Ես էլ դու եմ ես չկամ

289 #գրախոսություն

- 290 **Հովհաննես Իշխանյան** Երկու լուսանկար. մեկը պատերազմն է հաղթել մյուսը՝ լուսանկարչային մրցույթը

Սկսելով պատերազմից հետոն

Պատերազմից հետո, Վահանից հետո ես որոշել էի՝ վերջ: Ամեն ինչին:

Հայաստանի ու Արցախի մասին, պատերազմի ու պարտության մասին խոսում էի Վահանի հետ: Վահանի հետ էի խոսում նաև գրականության մասին: Վերջին տարիներին Վահանն էր «Ինքնագիրը» խմբագրում, բայց միշտ պնդում էր, որ խմբագրականը ես գրեմ: Գրում էի, հետո սկսում էր դա խմբագրել: Ու բանավիճում էինք. ինքը համոզում էր, որ մի քիչ ավելի պարզ գրեմ, հասկանալի գրեմ, խմբագրական է վերջապես: Ես քյալլա էի տալիս: Հաճախ համոզում էր որոշ բաներ փոխել. կռվելով քիչիկ-քիչիկ զիջում էի, հետո տեսնում էի, որ ճիշտ էր ասում: «Ինքնագիրը» կայանում էր (տանել չէր կարողանում այս բառը, ասեմ՝ ծնվում էր) իմ ու իր բանավեճերի շնորհիվ, մեր երկխոսության արդյունքն էր: Առհասարակ, անկախ գրական հանդեսի միտքը, է՛, դեռ ամենասկզբից՝ 2000-ից, իր գաղափարն էր:

Պատերազմից հետո ինքը դեռ գրականության հետ էր, ես որոշել էի՝ վերջ: Շատ ծանր էր տանում, որ նոր իշխանության պահապանները քար գցեցին «Ինքնագրի» վրա՝ քննադատության ձայնը լռեցնել փորձելով: Հանդեսով էր ապրում, հիվանդության էն խորքերից ապրելու հնար էր գտնում գրականության շնորհիվ: Ինքն իր խմբագիրներից մեկին՝ Ջոնին էր գովում, ես գիտեի, որ ինքն էր իսկական խմբագիր: Երկրի գլխին եկած աղետից հետո, իրենից հետո ես այլևս իմաստ չէի տեսնում որևէ բան անել: Վերջ:

Թեպետ գիտեի, որ Օսվենցիմից ու Աուշվիցից հետո էլ մարդիկ ապրում են ու գրում: Բայց ինձ ինչ ուրիշները, մարդիկ: Ուրիշները զուցե ողջ են, ես որոշել էի, որ, ասենք, մեռած եմ: Մեռածների տեղից նայում եմ՝ ինչ է կատարվում: Ես միայն իմ փայով էի հասկանում՝ սարսափ ֆիլմի կերպարի պես հայտնվել եմ մի վիճակում, որ ամեն ինչ տեսնում, լսում ու զգում եմ, բայց չեմ կարողանում անգամ ձկույթս շարժել:

«Որպես փրկություն, որպես լուծում» ակնկալվող բառերի փոխարեն՝ միայն «որպես բանաստեղծություն» հայտնվող բառերը (Լիլիթ Բլեյան)

Էսթետիկայի բավիղներում էթիկական լրջագույն խնդրից խուսանալու ժանր էի ընկալում, ինչը իսկապես էլ որոշ դեպքերում հենց այդպես է, երբ բանաստեղծությունը դառնում է քաղաքականությունից թաքնվելու տարածք:

Բայց հանկարծ երկու բան պատահեց գրեթե միաժամանակ: Newmag-ը «Ինքնագիրը» հրատարակելու աջակցություն առաջարկեց, իսկ Գրիգոր Պըլտյանն ուղարկեց իր բանաստեղծությունը՝ «Մանտրա ԽԸ»։ Ինձ կաթվածահարած աղետը մեջն էր: Ու հարցը.

գրել ու չգրել
այո կամ երբեք
ոչելով այոյելով
Չայոյելով

Ու հիշեցի, թե ինչպես է Գրիգորը տարիներով թել առ թելիկ հավաքել-ստեղծել մի ողջ կորուսյալ աշխարհ՝ Ցեղասպանությունից մազապուրծների պատմությունները՝ մահվան դատավճիռ ստացած լեզվով՝ արևմտահայերեն: Աղետի պատմություններ չի գրել, գրել է դրանից հետոյի կյանքի պատմություններ: Որ հետո ապրողները նույնպես չանհետանան ու իրենց գոյության փաստով իսկ վկայեն ջնջումը:

Չիշեցի «Ինքնագրում» հրապարակված Մարկ Նշանյանի հոդվածներն ու դասախոսությունները. ամենատարբեր փիլիսոփայական, գրականագիտական վերլուծությունների էն խորքում միշտ մի տեղ թաքնված կա խթանիչը՝ կորուսյալ աշխարհի վերջին՝ անհնարին վկայի վկայությունը:

Չիշեցի Դլյոզի խոսքը՝ «գրականությունը ժողովուրդ է ստեղծում»:

Չիշեցի Հրանտ Մաթևոսյանի Մեսրոպի խոսքը՝ հայ ժողովրդին Լեոն է հնարել: Թումանյանը նստել, երեխեքի համար «Շունն ու կատուն» է հորինել, մյուս սեղանին Լեոն նստել, հայ ժողովուրդ է հնարել: Իրականում հենց Թումանյանի «Շունն ու կատուն» է հայ ժողովուրդ ստեղծել: «Շունն ու կատուն»-ները:

Հիշեցի հայտնի դիտարկումը, թե Տուրգենևը ստեղծեց կանանց կերպարներ, որ դեռ չկային ռուսական իրականության մեջ և հայտնվեցին նրա գրականությունից հետո և դրա շնորհիվ, այսինքն՝ նրանց ստեղծեց գրականությունը. ստեղծեց լուռ, ինտելեկտուալ, նպատակասլաց, երազկոտ, արտաքննապես սառը և պայծառ ներաշխարհով աղջիկների:

Էլի շատ բաներ հիշեցի ու մտածեցի, որ եթե գրելով հնարավոր է էսքան բան ստեղծել, ուրեմն պիտի էլի գործին կաչել: Խոսեցի տարբեր գրողների հետ, խնդրեցի գրել «Ինքնագրի» համար ու... Կարծես շատերը հենց նման խթանի էին սպասում, որպեսզի վերսկսեն ապրել ու գործել: Մյուսները դեռ չեն կարողանում դուրս գալ լռության անձավից, որտեղ իրենց շարտել են պատերազմն ու կորուստը:

Եվ ահա հավաքվեց համարը. կարծես տապան էի հավաքում ամեն տեսակից փրկելու համար. իրենց չէ, իրենցով բոլորիս:

Մտածեցի՝ որպեսզի սկսենք, նախ պիտի մեզ կաթվածահարածը դնենք առաջներս ու նայենք աչքերին: Նայենք ուրիշների աչքերին՝ ինչ ու ինչպես են նրանք տեսնում: Պատերազմ:

Շեշտեմ. պատերազմի մասին «Ինքնագրի» այս համարը ստեղծելու նպատակը զուտ թերապևտիկ՝ գրելով տրավմաները հաղթահարելու պրակտիկան կամ պատմական վկայության պատասխանատվությունը չէ: Եթե նման դերակատարում էլ ունենա համարը, լավ, բայց ես իսկապես հավատում եմ, որ գրականությունն է ստեղծում աշխարհ, ժողովուրդ: Աղջիկներ: Ու տղաներ:

Եվ այսպես, հանդեսում պատերազմը երևում է ուղղակի և անուղղակի:

Համարը բացվում է Վահան Իշխանյանի վեպի հատվածով: Մոնրեալի սրճարանային զրույցի ընթացքում «գեղադիտակը» պտտվելով ստեղծում է տարբեր կտորներից կազմված նախշեր: Հենց սեփական և այլ հեղինակների տարբեր ժանրերի գործերի միահյուսմամբ կայանում է մի մտային ճամփորդություն ժամանակի ու տարածության մեջ՝ Հնդկաստանի անվճար բժշկից մինչև արցախյան առաջին պատերազմ ու բժիշկ Արցախ Բունիաթյան, որ նույնպես հիվանդներից փող չէր վերցնում: Անձնական, պատմական, քաղաքական ու վավերագրական պատումների խճանկարային համաձուլվածքը ստեղծում է միկրո-մակրո մասշտաբների շեշտակի փոփոխումներ, ինչի շնորհիվ անձն ու պատմությունն ասես զրուցում են իրար հետ, ինչպես հավասարը՝ հավասարի:

Համարում կտեսնեք «գրավված, սահմանային, բուֆերային» խրամատային ու այլ ռազմաքաղաքական քարտեզագրումների մեջ հոգևոր տեղադիրքի փնտրտուքն ու դրա սիրույն երկրի «մնացյալ հիշողության ներբեռնումը» բանաստեղծության մեջ (Լուսինե Եղյան):

Կտեսնեք այսօր երազանք ներկայացվող ազգամիջյան խաղաղ համակեցության տեսլականը, որպես Սովետի երբեմնի

իրականություն (Գուրգեն Խանջյան), ու նույն տաշտակի առաջ հայտնվելու զգացումը կհարցնի իմաստն էս շրջապատույտի: Ի տարբերություն այս անձնական վկայության՝ նույն պարույրաձև կրկնության մասին կկարդաք նաև պատմական սպեկտրով (Սուսաննա Հարությունյան):

Կտեսնեք, թե ինչպես կարող է մետաֆորիկ կամ պատկերավոր խոսքն ավելի վավերական լինել, քան վավերագրությունը՝ կոնկրետ փաստերից մեծժամանակյա ճշմարտության հետախուզման հավակնորդ ունենալով բանաստեղծական ձայնի իսկությունը (Մարինե Պետրոսյան):

Կտեսնեք պատերազմական իրականության դաժանագույն դրվագներ (Նարինե Կոռյան) և պատերազմի նախօրեի երևանյան բոհեմիկ անփույթ կյանքը՝ սպասվող հարձակման մասին տեղյակ պաշտոնյայի կոնֆորմիստական հայացքով (Հայկ Հովյան):

Կտեսնեք պատերազմն առանց պատերազմի. ռազմական գործողություններից վակուումված անշարժության, ծուլության, ոչմիբանության պղպշակ, որտեղ միակ անելիքը սպասելն է, մինչև «սպասելու ժամանակի ավարտը» (Սարգիս Հովսեփյան):

Կտեսնեք եվրոպական անհաղորդ միջավայրում սփյուռքահայի՝ սեփական պատմությունն ասելու փորձերի դատապարտվածությունը (Բյուրակն Իշխանյան): Եվ թե ինչպես է այդ անհաղորդության կանխագիտակցումը բուտաֆորիկ ականջի վերածում խլությունը, որի առջև հնարավոր է ողբալ (Աննա Դավթյան): Հյուսիս ու հարավ աշխարհների խուլ ու համրության առաջ, ջրի, հողի, քամու, Շուշվա ճանապարհին պառկածների լռությանն ի տես՝ եղերերգ ժանրը վերածվում է «օրորոցայինի» (Ներսես Աթաբեկյան): Աղետյալների պատմություններ հավաքող եվրոպական ականջին ի լուր հոսում են պաշտոնական հաղորդագրությունների, լուրերի, հարցազրույցների հատվածներ՝ միահյուսված տուժածների պատանեկան ճամբարի հիշողություններին (Գրիգ):

Տարբեր գործերից ժայթքում են սեր ու քնքշանք, ցավ, կորուսյալ արժանապատվության հայտ՝ նոր գլխարկ: Եվ մշակութապես մաշված հայրենասիրական կոչվող գրականության փոխարեն՝ ստեղծվում է նոր, իրականության «առաջին ընթերցման» փորձը, որ կարող է լեգիտիմացնել այդ բանադրված ժանրը:

Հանդեսի գործերում ընդգծված է նաև մի ուրիշ հատկանիշ՝ մարմնականությունը: Դե, պատերազմը բզկտում է մարմինը:

Ներկայացված գործերում մի շարքը կտրուկ տարբերվում է մյուսներից՝ չենրիկ Պիպոյանի ուտելիքների ձոնը, որ հատուկ եմ ներառել, որպեսզի բոլորեքյան ցավի ու կորստի մեջ վերածնության հուռթի շունչը բերի՝ ասես վերստեղծելով «ազգային խոհանոցը»: Շան, կատվի հետ՝ նաև սպասը, դեղձը, ձմերուկը՝ կորիզ առ կորիզ:

Մարմնականությունը վայելքի փառաբանումն է միայն այս

գործում, իսկ այս «մենյուից» դուրս մնացած գործերում ֆիզիկական ու հոգեբանական բզկտված ինքնության մասին է խոսում: Ու պատահական չէ, որ հայտնվում է Ֆրանկենշտեյնը՝ տարբեր կարկատաններից հավաքող-հավաքված արարիչն ու արարածը: Ասես այս երկիրը, որ ինքն իրեն ստեղծել է պատմականորեն ցաքուցրիվ տարբեր օրգաններից, մարմնամասերից: Պիտի ստեղծեր այնպես, որ ամեն կտոր այլևս նախկին առանձինը չլիներ, այլ նոր իմաստ ձեռք բերեր ընդհանուր մարմնում. պահպանելով իր յուրահատկությունը՝ գործեր ընդհանուր սրտի համար, հարաբերակցվելով մյուս օրգանների հետ՝ ստեղծեր մի նոր ինքնություն՝ Ֆրանկենշտեյն:

Բայց ստեղծվեց ուրիշ «բեկորակցուկ»՝ հազարավոր տարբեր ոտքերից ու ձեռքերից, կտրտված եղունգներից, «ելակի քաղցրահյութով օծված շիրոտ մարմնաջարդոններից» կազմված Ֆրանկենշտեյնը, ում անմիջապես ճանաչում են թագավորի մերկությունը տեսնող երեխաներն ու գոռում՝ բոբո, bobo (Անի Ասատրյան):

Եվ ահա «Ինքնագրի» այս համարից պիտի դուրս գան Հայկ Հովյանի պատմվածքում ուղղակիորեն ներկայացված բոհեմիկ բուրժուազիայի աշխարհայացքի ու վարքի դեմ սեփական պատմությամբ կռիվ տվող երեխաները, պատերազմի վկաներ, աղջիկներ ու տղաներ՝ սունձըններ:

Պիտի դուրս գան ու մտնեն մեր իրականություն, իրականանան:

Վիլլետ Գրիգորյան



#բնագիր



Դառը ծով

(հատված վեպից)



Վահան Իշխանյան

Նազիկ Արմենակյան

Դավիթ Մանդելի «Պետրոգրադի աշխատավորները 1917 թվի հեղափոխություններում» ֆրանսերեն գրքի շնորհանդեսն է *L'amère à boire* փաբում: Փաբի անունը ղնց թարգմանենք: Ֆրանսերեն բառախաղ է. որ լսելով հայերեն թարգմանես, կլինի խմել ծովը, որ նշանակում է նաև դժվարություն ունենալ՝ էնքան դժվար ա, ոնց որ ծովը խմես, իսկ որ կարդում ես, լինում ա խմել դառնություն: Ո՞ր գարեջրից կխմես, սա ամենադառն ա,– հարցնում է Ռաֆայելը: Հա, իհարկե, ամենադառը:

Չէ, բառախաղը ես չեմ բացատրում, իմ ֆրանսերենն *անքուլե, բեգե, բոքու և մերսի* բառերից էն կողմ դեռ չէր անցել, հա մեկ էլ *լուե*: Բացատրում ա Եվան, Երևանից եկել Քվեբեկ, քվեբեկցիներին ֆրանսերեն է սովորացնում:

– Ահա սովետական դպրոցը,– ասեց Լյուդմիլան, հենց իմացավ, որ Եվան ֆրանսերենի ուսուցիչ է,– ահա թե ինչպես էր լեզու սովորեցնում, որ Հայաստանից եկել, Քվեբեկում ֆրանսերեն եք դասավանդում:

– Բայց ես Սովետից հետո եմ սովորել:

– Նշանակություն չունի, նույն շկուլան է:

Եվան ժպտաց, չէ, էլ չասեց, որ նույն շկուլան չի, Գյումրիի բիլենգ ֆրանսիական դպրոցը ֆինանսավորում էր ֆրանսիական դեսպանատունը, նույն առարկան առավուտը հայերեն, երեկոյան ֆրանսերեն էին անցնում: Ինչ-որ պահից էլ չֆինանսավորեցին, ինչից հետո Գյումրին էլ չի տալիս աշխարհին ֆրանսերեն սովորեցնող մասնագետներ:

.....

«Արևմտյան պատմաբանները 1917 թվի հեղափոխության մեջ աշխատավորների դերը շատ են նվազեցնում՝ հաճախ ներկայացնելով նրանց անգիտակից զանգված, տարերք, որը բոլշևիկներն օգտագործեցին իրենց շահերի համար: Իսկ սովետական պատմաբաններն էլ կրկին իջեցնում են աշխատավորների դերը՝ ընդգծելով կուսակցության առաջատար դերը»:

2017-ի դեկտեմբերն է, Մոնրեալ, Լատինական թաղամասում Սեն Դենի փողոցի վրա, L'amère à boire փաբում հասցնում ենք անկյունում ազատ սեղան գտնել երեքս՝ ես, Ռաֆայելը, Եվան: Արագ լցվող սրահի տարբեր կողմերից ռուսերեն խոսքը համարյա հայերենի չափ հարազատ է հնչում՝ Պետերբուրգ, բանվորներ, ռուսական հեղափոխություններ բառերը Դառը ծով են բերել Սովետի հետ ինչ-որ առնչություն ունեցող մոնրեալցիների:

— Տես, հաստատ ռուս կլինի, – ցույց ա տալիս Եվան Մանդելի հետ զրուցող կնոջը:

— Հա, չգիտեմ՝ ռուս ա, թե չէ, բայց հաստատ նախկին Սովետից ա:

Ու մեկ էլ Մանդելը հայացքը պտտեց փաբում ու կանգնեցրեց մեզ վրա: Ծանոթացեք, նրանք Հայաստանից են, ռուսերեն կխոսեք: Իսկապես, Լյուդմիլա՝ Կողքին բոյով, փողկապով մարդ էր, բայց կարծես չներկայացրեց էլ, ռուսերեն որ չգիտի, էլ խի ծանոթանա:

— Վահան, խնդրեմ, նստեք:

Джйотиш¹, Северо-Индийская (алмазная) натальная карта.

Вахан. Дата, время и место рождения: 10.05.1964, 17:44, Ереван.

— Եվա:

— Վաղո՞ց եք Վանադայում:

— Չէ, ես մի ինը ամիս, Եվան՝ մեկուկես տարի:

— Իսկ ի՞նչ եք անում:

— Ես՝ բան չէ, եթե գործ կարելի է անվանել, ուրեմն էստեղից խմբագրում եմ հայերեն գրական կայք, Ինքնագիր է կոչվում inknagir.org:

Джйотиш: Они могут работать в сфере информации, из них получаются неплохие программисты, журналисты, писатели и менеджеры. В любом случае их работа не должна быть связана с однообразной деятельностью.

¹ Ջյոտիշ - Վեդայական աստղագուշակություն (ծանոթագրությունները՝ հեղինակների)

- Ինչ ուղղվածություն ունի:
- Այսինքն:
- Ձախ թե՛ աջ:

Ըրըը, ոչ ոք չէր հարցրել «Ինքնագրի» դիրքորոշումը, մենք էլ չէինք մտածել, երևի որ չայաստանում մամուլը ձախ ու աջով չի որոշվում:

Ե՞րբ սկսեցի հասկանալ, որ ինքս ձախ պիտի լինեմ: Սովետում, մեր ընտանիքում ձախը սրիկա, ավանտյուրիստ, քանդարար, արյունարբու էր կամ էլ ծաղրի առարկա: Մենք երազում էինք Արևմուտք ու արևմտյան ազատությունը՝ մարդ ծնվում է ազատ, անհատի ազատությունն ամեն ինչից վեր է, անձնական շահն է տնտեսության մղիչ ուժը, խի՞ Սովետում խանութները դատարկ են, ապրանք չկա, որովհետև անձնական շահ չկա, որ արտադրեն, եկամուտ ունենան, իսկ ապրանքի որակն էլ բարձրացնում է մրցակցությունը, տեսնում ես՝ քո ապրանքը լավ չի վաճառվում, մրցակցի ապրանքն են առնում, որակը բարձրացնում ես, որ քոնը լավ վաճառվի: Ազատ շուկա, մրցակցությունը խթանում է արտադրության որակն ու քանակը: Տես արտասահմանում, մտնես խանութ, «չկա» բառը չկա, էս ինչ է էս քյամբախը, խանութները դատարկ-դատարկ, ոչ ոք չափազրգռված չի նորմալ ապրանք արտադրել:

Ասում է՝ ախպարը նամակ է գրում քրոջը արտասահման՝ խանութները դատարկ-դատարկ են, մտնում ես, բան չկա առնելու: ԿԳԲ-ն նամակը կարդում է, կանչում է, զգուշացնում՝ տես, որ էլի գրես, կնստցնենք: Մի ամիս համբերում, էլի է գրում՝ խանութները դատարկ-դատարկ են, էլի կանչում են ԿԳԲ, կգբիչնիկը վախացնելու համար ատրճանակը հանում, գլխին ա պահում, էլի գրես, կխփենք: Էս մարդը ջղային-ջղային ասում է՝ էս ինձ խաբեցիք, բերիք էս քյամբախը, էս կյանք է, գրելու եմ, խփում եք, խփեք: Կգբիչնիկը որ ավելի վախացնի, դատարկ ատրճանակը չխկացնում ա: Փամփուշտ ավ՛ չունիք,– խնդում ա ախպարը:

Սովետն ու արտասահմանը մենք համեմատելու ավելի շատ հնարավորություններ ունեինք: Արտասահմանում, «արևմտյան դրախտում» լիքը բարեկամներ ունեինք, համ ազգականներ, մամայիս ամբողջ գերդաստանը ԱՄՆ-ում ու Ֆրանսիայում էր, քեռին՝ Վազգեն Անդրեասյանը, ընտանիքով՝ զավակներով ու թոռներով՝ Փարիզում, տատիս հորեղբոր գերդաստանը՝ Անդրեասյանների մյուս ճյուղը, ԱՄՆ-ում՝ Անդրանիկ ու Արտավազը Անդրեասյան եղբայրները, երկուսն էլ՝ գրող: չամ էլ հորս սփյուռքում գիտեին, հայրենասեր է, հայոց լեզվի պաշտպան, դասական ուղղագրության կողմնակից, ու սփյուռքահայ շատ մտավորականներ որ գալիս էին Երևան, հորս էլ էին հանդիպում:

Արտասահմանից որ հյուր էր գալիս մեր տուն՝ Լիբանանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, նվերներ էին բերում, գրիչներ, ծամոններ, իհարկե, հիմնականում շորեր՝ հաճախ հազած, բայց հոգ չէր, գույնզգույն իմպրտնի շորերի համար ուշքներս գնում էր: Սպասում էի՝ երբ են

հյուրերը գնալու, որ գցվեմ-բացեմ տոպրակները: Ո՛վ էր՝ դեղին, նեղ վելվետ էր բերել, վրայովս չէր լինում, նեղ-նեղ, բայց զոռով հագնում էի, ձվերս ցցվում էին:

Բա ի՞նչ շավվարից էիր ուզում ազատվել, որ խցկվում էիր քո չափսից նեղ վելվետի մեջ: Խանութից շավվար ո՛վ էր առնում: Կտորի խանութից շավվարի կտորն առնում էի, տանում դերձակի մոտ, 15 ռուբլով շավվար կարել տալիս: Մեր թաղերում էր ապրում, բիճա մարդ էր, հիանալի կարում էր, մեջը հանգիստ, ազատ, հիմա եմ հասկանում, որ հազար վելվետ արժեր:

Իսկ ծամո՞նը: Չէ, Երևանում վաճառվող ծամոնը մի բան չէր, անշուք փաթեթով, երկու բոպե ծամում ես, համը կորչում է, դառնում է ինչ-որ ռեզին: Ամերիկյան ծամոնն էր ծամոնը, արտասահմանյան ապրանքի խորհրդանիշն էր:

Մամաս հայաթի տղաներին ասել էր, որ ով տեսնի՝ փողոցի կատուներին ու շներին հալածում են, չթողնի, փրկի կենդանիներին, ծամոն նվեր կստանա: Մեր հայաթի Հաջին համոզեց, որ մամայիս խաբեմ, բարձրացանք մեր տուն, մամաս դուռը բացեց՝ մամ, Սաքոն նոր մի կատու փրկեց: Հա, ապրես, Սաքո ջան, սպասի: Ու գնաց, ծամոն բերեց, տվեց: Ու տենց երկու անգամ: Ծամոն WRIGLEY'S SPEARMINT, սովետահայ երեխայի երազանք:

Ամենալավ նվեր բերողը Սան Ֆրանցիսկոյից Ալբերտ Նալբանդյանն էր, նրա նվերները բոլորը նոր էին, ոչ մի օգտագործած իր: Հատուկ Հայաստան էր գալիս, որ մտավորականներին նվերներ բաժանի, կարծեմ մի տարի էլ Օրբելյանի ամբողջ նվագախմբի համար երաժշտական գործիքներ բերեց: Ժպտադեմ, բեղերով, իսկը Չարլի Չապլինը, միայն ոչ թե տխուր, այլ ուրախ:

Ալբերտ Նալբանդյանի մահախոսականն ասում է.

His love of all things Armenian led him to make nearly 20 yearly trips to the USSR during the cold war years, as he took medical supplies and gifts to those in need year after year.²

Նալբանդյանը նվերներ բերելով հակասովետական արա՛րք էր անում, թե՛ բարեգործություն: Սովետի փլուզումից հետո Ալբերտ Նալբանդյանն ապրեց ևս 27 տարի, մահացավ 2017-ին, 95 տարեկանում, բայց այլևս նվերներ չէր բերում, թեև իրական սառը օրերը Սովետի փլվելուց հետո սկսվեցին: Ջեռուցումն ավերվեց, ու սկսեցին սառը ձմեռները, որ տանդ մեջ ցրտից ոչ մի տեղ չէիր կարող պատսպարվել, նավթի վառարանների դիմաց նստում ու փորձում էիր մի քիչ ջերմություն կորզել: Իսկական ընչազորկները, որ նույնիսկ շոր չունեն՝ վրաները գցեն, անկախ Հայաստանում են:

Մոտ 60 խուլ հունվարի 25-ին գնացել էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն խնդրելու, որ բարձրացնեն իրենց

2 <https://www.legacy.com/us/obituaries/sfgate/name/albert-nalbandian-obituary?pid=185379770>